Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ

Քննական առարկա 3

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ ԵՎ ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԻՐԱՎՈՒՆՔ

Քննաթերթ

Հարցեր 1-25	*50 միավոր*
Խնդիր 1	*14 միավոր*
Խնդիր 2	*12 միավոր*
Խնդիր 3	*12 միավոր*
Խնդիր 4	*12 միավոր*
Ընդամենը	***100 միավոր***

Հունվար, 2025թ.

Հարցեր 1-25

Բազմակի ընտրության 25 հարց, յուրաքանչյուր հարցի ճիշտ պատասխանը գնահատվում է 2 միավոր:

1. **Ե՞րբ է ծագում քաղաքացու իրավունակությունը:**

ա/ Նրա 18 տարին լրանալու պահին:
բ/ Նրա ծննդյան պահին:
գ/ Նրա՝ օրենքով սահմանված կարգով ՀՀ քաղաքացիություն ստանալու պահին:
դ/ Նրա 16 տարին լրանալու պահին:

2. **Նշված պնդումներից ո՞րն է ճիշտ:**

ա/ Շահագրգիռ անձանց դիմումով դատարանը կարող է քաղաքացուն անհայտ բացակայող ճանաչել, եթե մեկ ամսվա ընթացքում նրա բնակության վայրում տեղեկություններ չկան նրա գտնվելու վայրի մասին:
բ/ Շահագրգիռ անձանց դիմումով տեղական ինքնակառավարման մարմինը կարող է քաղաքացուն անհայտ բացակայող ճանաչել, եթե մեկ տարվա ընթացքում նրա բնակության վայրում տեղեկություններ չկան նրա գտնվելու վայրի մասին:
գ/ Շահագրգիռ անձանց դիմումով տեղական ինքնակառավարման մարմինը կարող է քաղաքացուն անհայտ բացակայող ճանաչել, եթե մեկ ամսվա ընթացքում նրա բնակության վայրում տեղեկություններ չկան նրա գտնվելու վայրի մասին:
դ/ Շահագրգիռ անձանց դիմումով դատարանը կարող է քաղաքացուն անհայտ բացակայող ճանաչել, եթե մեկ տարվա ընթացքում նրա բնակության վայրում տեղեկություններ չկան նրա գտնվելու վայրի մասին:

3. **Ընտրել սխալ պատասխանը: Քաղաքացիական իրավունքի օբյեկտ է՝**

ա/ Գույքը՝ ներառյալ դրամական միջոցները, կրիպտոակտիվները, արժեթղթերը և գույքային իրավունքները:
բ/ Առևտրային ընկերությունները:
գ/ Տեղեկատվությունը:
դ/ Ոչ նյութական բարիքները:

4. **Նշվածներից ո՞րը չի հանդիսանում գրավի տեսակ՝**

ա/ Փափուկ գրավը:
բ/ Դրամական միջոցների գրավը:
գ/ Հիփոթեքը:
դ/ Իրավունքների գրավը:

5. **Նշված պնդումներից ո՞րն է ճիշտ ըստ «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի.**

ա/ Բաժնետիրական ընկերություն է համարվում ոչ առևտրային կազմակերպություն հանդիսացող այն տնտեսական ընկերությունը, որի կանոնադրական կապիտալը բաժանված է Ընկերության նկատմամբ բաժնետերերի պարտավորական իրավունքը հավաստիացնող որոշակի թվով բաժնետոմսերի:
բ/ Բաժնետիրական ընկերություն է համարվում առևտրային կազմակերպություն հանդիսացող այն տնտեսական ընկերությունը, որի կանոնադրական կապիտալը բաժանված է Ընկերության նկատմամբ բաժնետերերի պարտավորական իրավունքը հավաստիացնող որոշակի թվով բաժնետոմսերի:

գ/ Բաժնետիրական ընկերություն է համարվում ոչ առևտրային կազմակերպություն հանդիսացող այն տնտեսական ընկերակցությունը, որի կանոնադրական կապիտալը բաժանված է Ընկերության նկատմամբ բաժնետերերի պարտավորական իրավունքը հավաստիացնող որոշակի թվով բաժնետոմսերի:
դ/ Բաժնետիրական ընկերություն է համարվում առևտրային կազմակերպություն հանդիսացող այն տնտեսական ընկերակցությունը, որի կանոնադրական կապիտալը բաժանված է Ընկերության նկատմամբ բաժնետերերի պարտավորական իրավունքը հավաստիացնող որոշակի թվով բաժնետոմսերի:

6. **Նշված պնդումներից ո՞րն է ճիշտ ըստ «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի:**

ա/ Խոշոր են համարվում մեկ կամ մի քանի փոխկապված գործարքները, որոնք, բացառությամբ բաժնետիրական ընկերության բնականոն տնտեսական գործունեության շրջանակներում կատարվող գործարքների, ուղղակի կամ անուղղակի կապված են ընկերության կողմից գույքի ձեռքբերման, օտարման կամ գույքի օտարման հնարավորության հետ, և որոնց արժեքը գործարքը կնքելու մասին որոշում ընդունելու պահի դրությամբ կազմում է Ընկերության ակտիվների հաշվեկշռային արժեքի 40 և ավելի տոկոսը:
բ/ Խոշոր են համարվում մեկ կամ մի քանի փոխկապված գործարքները, որոնց առարկա է հանդիսանում Ընկերության հասարակ (սովորական) կամ հասարակ (սովորական) բաժնետոմսերի փոխարկվող արտոնյալ բաժնետոմսերի (բացառությամբ ներդրումային ֆոնդերի բաժնետոմսերի) տեղաբաշխումը, որը կազմում է Ընկերության կողմից արդեն տեղաբաշխված հասարակ (սովորական) բաժնետոմսերի 40 և ավելի տոկոսը:
գ/ Խոշոր են համարվում մեկ կամ մի քանի փոխկապված գործարքները, որոնք, բացառությամբ բաժնետիրական ընկերության բնականոն տնտեսական գործունեության շրջանակներում կատարվող գործարքների, ուղղակի կամ անուղղակի կապված են ընկերության կողմից գույքի ձեռքբերման, օտարման կամ գույքի օտարման հնարավորության հետ, և որոնց արժեքը գործարքը կնքելու մասին որոշում ընդունելու պահի դրությամբ կազմում է Ընկերության ակտիվների հաշվեկշռային արժեքի 50 և ավելի տոկոսը:
դ/ Խոշոր են համարվում մեկ կամ մի քանի փոխկապված գործարքները, որոնք, բացառությամբ բաժնետիրական ընկերության բնականոն տնտեսական գործունեության շրջանակներում կատարվող գործարքների, ուղղակի կամ անուղղակի կապված են ընկերության կողմից ծառայությունների մատուցման հետ, և որոնց արժեքը գործարքը կնքելու մասին որոշում ընդունելու պահի դրությամբ կազմում է Ընկերության ակտիվների հաշվեկշռային արժեքի 50 և ավելի տոկոսը:

7. **Նշվածներից ո՞րը բաժնետիրական ընկերության տնօրենների խորհրդի լիազորություն չէ:**

ա/ Պարտատոմսերի և այլ արժեթղթերի տեղաբաշխումը:
բ/ Ընկերության աուդիտն իրականացնող անձի վճարման չափի սահմանումը:
գ/ Ընկերության լուծարումը:
դ/ Ընկերության պահուստային և այլ հիմնադրամների օգտագործումը:

8. **Նշվածներից ո՞րն է շինծու գործարք:**

ա/ Մեկ այլ գործարքի քողարկման նպատակով կնքված գործարքը:
բ/ Առերևույթ, առանց համապատասխան իրավական հետևանքներ առաջացնելու մտադրության կնքված գործարքը:
գ/ Առանց լիազորագրի այլ անձին պատկանող գույքի առուվաճառքի գործարքը:
դ/ Բոլոր պատասխանները սխալ են:

9. Ընտրել ճիշտ պատասխանը: Ըստ ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի Հայցային վաղեմությունը չի տարածվում՝

ա/ Ավանդները վերադարձնելու վերաբերյալ ավանդատուների կողմից բանկին ներկայացվող պահանջների վրա:
բ/ Վարկային պայմանագրերից ծագող պահանջների վրա:
գ/ Անշարժ գույքի գրավից ծագող պահանջների վրա, եթե դա անձի միակ բնակության վայրն է:
դ/ Պայմանագրի անվավերությանը վերաբերող պահանջների վրա:

10. Նշված պնդումներից ո՞րն է ճիշտ:

ա/ Եթե կապալառուի տրամադրած նյութերի թերությունների պատճառով աշխատանքի արդյունքը ձեռք չի բերվել կամ ձեռք բերված արդյունքը եղել է այնպիսի թերություններով, որոնք այն դարձնում են կապալի պայմանագրով նախատեսված օգտագործման, իսկ կապալի պայմանագրում նման պայմանի բացակայության դեպքում՝ սովորական օգտագործման համար ոչ պիտանի, կապալառուն իր կատարած աշխատանքի դիմաց իրավունք ունի պահանջել վարձատրություն:
բ/ Եթե պատվիրատուի տրամադրած նյութերի թերությունների պատճառով աշխատանքի արդյունքը ձեռք չի բերվել կամ ձեռք բերված արդյունքը եղել է այնպիսի թերություններով, որոնք այն դարձնում են կապալի պայմանագրով նախատեսված օգտագործման, իսկ կապալի պայմանագրում նման պայմանի բացակայության դեպքում՝ սովորական օգտագործման համար ոչ պիտանի, կապալառուն իր կատարած աշխատանքի դիմաց իրավունք ունի պահանջել վարձատրություն:
գ/ Եթե պատվիրատուի տրամադրած նյութերի թերությունների պատճառով աշխատանքի արդյունքը ձեռք չի բերվել կամ ձեռք բերված արդյունքը եղել է այնպիսի թերություններով, որոնք այն դարձնում են կապալի պայմանագրով նախատեսված օգտագործման, իսկ կապալի պայմանագրում նման պայմանի բացակայության դեպքում՝ սովորական օգտագործման համար ոչ պիտանի, կապալառուն իր կատարած աշխատանքի դիմաց իրավունք ունի պահանջել վարձատրություն միայն եթե դա նախատեսված է պայմանագրով:
դ/ Եթե պատվիրատուի տրամադրած նյութերի թերությունների պատճառով աշխատանքի արդյունքը ձեռք չի բերվել կամ ձեռք բերված արդյունքը եղել է այնպիսի թերություններով, որոնք այն դարձնում են կապալի պայմանագրով նախատեսված օգտագործման, իսկ կապալի պայմանագրում նման պայմանի բացակայության դեպքում՝ սովորական օգտագործման համար ոչ պիտանի, կապալառուն իր կատարած աշխատանքի դիմաց իրավունք չունի պահանջել վարձատրություն:

11. Նշվածներից ո՞ր տարբերակն է ճիշտ: Փորձաշրջան չի կարող նախատեսվել, եթե աշխատանքի են ընդունվում՝

ա/ Տասնութ տարին չլրացած անձինք կամ մասնագիտական կրթության և ուսուցման ծրագրով աշխատանքի վրա հիմնված ուսումնառության շրջանակում սահմանված որոշակի աշխատանք կատարող սովորողները:
բ/ Հաշմանդամություն ունեցող անձինք:
գ/ Վաթսունհինգ տարին լրացած անձինք:
դ/ Բոլոր տարբերակները ճիշտ են:

12. Նշված տարբերակներից ո՞րն է սխալ: Որոշակի ժամկետով աշխատանքային պայմանագրեր կնքվում են՝

ա/ Ընտրովի պաշտոններում աշխատողների հետ:
բ/ Սեզոնային աշխատանքներ կատարողների հետ:
գ/ ժամանակավորապես բացակայող աշխատողին փոխարինող աշխատողի հետ:

դ/ Հղի կանանց հետ:

13. Նշվածներից ո՞ր դեպքում գործատուն իրավունք չունի առանց ծանուցման լուծելու աշխատողի հետ կնքված աշխատանքային պայմանագիրը:

ա/ Աշխատողին նախկին աշխատանքում վերականգնելու դեպքում:
բ/ Աշխատողի նկատմամբ վստահությունը կորցնելու դեպքում:
գ/ Գործատուի լուծարման դեպքում:
դ/ Պարտադիր բժշկական զննությունից աշխատողի հրաժարվելու կամ խուսափելու դեպքում

14. Ընտրել սխալ պատասխանը: Աշխատանքային պայմանագրի լուծումը գործատուի նախաձեռնությամբ արգելվում է՝

ա/ Աշխատողի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում:
բ/ Տարերային աղետների, տեխնոլոգիական վթարների, համաճարակների, դժբախտ պատահարների, հրդեհների և արտակարգ բնույթ կրող այլ դեպքերի կանխարգելման կամ դրանց հետևանքների անհապաղ վերացման ժամանակահատվածում, եթե, այդ դեպքերով պայմանավորված, աշխատողը չի ներկայացել աշխատանքի:
գ/ Գործադուլ հայտարարելու մասին որոշումն ընդունելուց հետո և գործադուլի ընթացքում, եթե աշխատողն այդ գործադուլին մասնակցում է Աշխատանքային օրենսգրքով սահմանված կարգով:
դ/ Հղի կանանց հետ՝ հղիության մասին գործատուին տեղեկանք ներկայացնելու օրվանից մինչև հղիության և ծննդաբերության արձակուրդի ավարտման օրվանից հետո երկու ամիսը լրանալը:

15. Ընտրել սխալ պատասխանը: Գործատուն իրավունք ունի աշխատողի նկատմամբ վստահությունը կորցնելու հիմքով լուծելու աշխատանքային պայմանագիրը վստահությունը կորցրած աշխատողի հետ, եթե աշխատողը՝

ա/ Ոգելից խմիչքների, թմրամիջոցների կամ հոգեներգործուն նյութերի ազդեցության տակ աշխատավայրում է գտնվել կամ աշխատավայրում կամ աշխատավայրից դուրս աշխատանքային գործառույթներն է իրականացրել:
բ/ ՈՒսումնադաստիարակչական գործառույթներ իրականացնող աշխատողը թույլ է տվել տվյալ աշխատանքը շարունակելու հետ անհամատեղելի արարք:
գ/ Չի պահպանել (խախտել է) աշխատողների անվտանգության ապահովման և առողջության պահպանության մասին իրավական ակտերի, աշխատանքների կազմակերպման և իրականացման կանոնների, հրահանգների պահանջները, որն առաջացրել է կամ կարող էր առաջացնել ծանր հետևանքներ՝ վտանգելով անձանց կյանքն ու առողջությունը կամ իրական սպառնալիք ստեղծելով անձանց կյանքի և առողջության համար կամ նրանց կյանքին ու առողջությանը պատճառելով վնաս:
դ/ Կատարել է այնպիսի արարք, որի հետևանքով գործատուն կրել է կամ կարող էր կրել նյութական վնաս:

16. Նշված պնդումներից ո՞րն է ճիշտ:

ա/ Վարչարարությունը ցանկացած սուբյեկտի արտաքին ներգործություն ունեցող գործունեությունն է, որը եզրափակվում է վարչական կամ նորմատիվ ակտերի ընդունմամբ, ինչպես նաև գործողությունը կամ անգործությունը, որն անձանց համար առաջացնում է փաստական հետևանքներ:
բ/ Վարչարարությունը վարչական մարմինների ներքին ներգործություն ունեցող գործունեությունն է, որը եզրափակվում է վարչական կամ նորմատիվ ակտերի ընդունմամբ, ինչպես նաև գործողությունը կամ անգործությունը, որն անձանց համար առաջացնում է փաստական հետևանքներ:

գ/ Վարչարարությունը վարչական մարմինների արտաքին ներգործություն ունեցող գործունեությունն է, որը եզրափակվում է վարչական կամ նորմատիվ ակտերի ընդունմամբ, ինչպես նաև գործողությունը կամ անգործությունը, որն անձանց համար առաջացնում է փաստական հետևանքներ:
դ/ Վարչարարությունը վարչական մարմինների արտաքին ներգործություն ունեցող գործունեությունն է, որը եզրափակվում է վարչական կամ նորմատիվ ակտերի ընդունմամբ, ինչպես նաև գործողությունը կամ անգործությունը, որն անձանց համար չի առաջացնում փաստական հետևանքներ:

17. Նշված պնդումներից ո՞րն է ճիշտ:
ա/ Բարենպաստ վարչական ակտն այն վարչական ակտն է, որի միջոցով վարչական մարմիններն անձանց տրամադրում են իրավունքներ կամ նրանց համար ստեղծում են այդ անձանց իրավական կամ փաստացի դրությունը բարելավող ցանկացած այլ պայման:
բ/ Միջամտող վարչական ակտն այն վարչական ակտն է, որի միջոցով վարչական մարմինները մերժում, միջամտում, ընդհուպ սահմանափակում են անձանց իրավունքների իրականացումը, որևէ պարտականություն են դնում նրանց վրա կամ ցանկացած այլ եղանակով վատթարացնում են նրանց իրավական կամ փաստացի դրությունը:
գ/ Եթե վարչական մարմինը հիմնավոր կասկածներ ունի անձանց ներկայացրած տվյալների, տեղեկությունների իսկության վերաբերյալ, ապա ինքը պարտավոր է ինքնուրույն և իր հաշվին ձեռնարկել միջոցներ՝ դրանց իսկության մեջ հավաստիանալու համար:
դ/ Բոլոր տարբերակները ճիշտ են:

18. Նշված պնդումներից ո՞րն է սխալ:
ա/ Վարչական մարմիններին արգելվում է անհավասար մոտեցում ցուցաբերել միատեսակ փաստական հանգամանքների նկատմամբ, եթե առկա չէ դրանց տարբերակման որևէ հիմք:
բ/ Եթե վարչական մարմինը որևէ հայեցողական լիազորություն իրականացրել է որոշակի ձևով, ապա միանման դեպքերում հետագայում ևս պարտավոր է իր այդ հայեցողական լիազորությունն իրականացնել նույն ձևով և ոչ մի պարագայում չի կարող հրաժարվել այդ սահմանափակումից:
գ/ Վարչական մարմինները պարտավոր են անհատական մոտեցում ցուցաբերել էապես տարբեր փաստական հանգամանքների նկատմամբ:
դ/ Բոլոր տարբերակները սխալ են:

19. Նշված տարբերակներից ո՞րն է ճիշտ: Պարտապանը՝ դատարանի վճռով կարող է սնանկ ճանաչվել՝
ա/ Հարկադրված սնանկության դիմումի հիման վրա՝ եթե թույլ է տվել օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկը գերազանցող անվիճելի վճարային պարտավորությունների 90-օրյա կամ ավելի ժամկետով կետանց, և վճռի կայացման պահին նշված կետանցը շարունակվում է (փաստացի անվճարունակություն):
բ/ Հարկադրված սնանկության դիմումի հիման վրա՝ եթե թույլ է տվել օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկը գերազանցող անվիճելի վճարային պարտավորությունների 60-օրյա կամ ավելի ժամկետով կետանց, և վճռի կայացման պահին նշված կետանցը շարունակվում է (փաստացի անվճարունակություն):
գ/ Հարկադրված սնանկության դիմումի հիման վրա՝ եթե թույլ է տվել օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկը գերազանցող անվիճելի վճարային պարտավորությունների 90-օրյա կամ ավելի ժամկետով կետանց, և վճռի կայացման պահին նշված կետանցը շարունակվում է (փաստացի անվճարունակություն):
դ/ Հարկադրված սնանկության դիմումի հիման վրա՝ եթե թույլ է տվել օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկը գերազանցող անվիճելի վճարային

պարտավորությունների 60-օրյա կամ ավելի ժամկետով կետանց, և վճռի կայացման պահին նշված կետանցը շարունակվում է (փաստացի անվճարունակություն):

20. Ընտրել սխալ տարբերակը: Համաձայն «Սնանկության մասին» ՀՀ օրենքի՝ վճարային պարտավորությունն անվիճելի է՝

ա/ Վճարային պարտավորությունը ճանաչված է օրինական ուժի մեջ մտած վճռով կամ դատավճռով, և բացակայում է հաշվանցի հնարավորությունը:
բ/ Պահանջը հիմնված է գրավոր գործարքի վրա, և պարտապանը չի ապացուցում, որ տվյալ պահանջի դեմ առարկելու բավարար հիմքեր ունի (ներառյալ՝ պահանջի հաշվանցը):
գ/ Պահանջի չվիճարկվող մասը գերազանցում է օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկը:
դ/ Պահանջը բխում է օրենքով սահմանված հարկեր, տուրքեր, այլ վճարներ վճարելու պարտապանի պարտավորությունից, և պարտապանը չի ապացուցում, որ տվյալ պահանջի դեմ առարկելու բավարար հիմքեր ունի (ներառյալ՝ պահանջի հաշվանցը):

21. Նշված պնդումներից ո՞րն է ճիշտ:

ա/ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ստեղծված իրավաբանական անձը քրեական օրենքով պաշտպանվող շահերի դեմ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս կատարված հանցանքի համար ենթակա է քրեական պատասխանատվության Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով, եթե տվյալ հանցագործության համար օտարերկրյա պետությունում քրեական պատասխանատվության չի ենթարկվել:
բ/ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ստեղծված իրավաբանական անձը քրեական կամ որոշ դեպքերում քաղաքացիական օրենքով պաշտպանվող շահերի դեմ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս կատարված հանցանքի համար ենթակա է քրեական պատասխանատվության Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով, եթե տվյալ հանցագործության համար օտարերկրյա պետությունում քրեական պատասխանատվության չի ենթարկվել:
գ/ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ստեղծված իրավաբանական անձը քրեական օրենքով պաշտպանվող շահերի դեմ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս կատարված հանցանքի համար ենթակա է քրեական պատասխանատվության Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով, եթե տվյալ հանցագործության համար օտարերկրյա պետությունում քրեական պատասխանատվության է ենթարկվել:
դ/ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ստեղծված իրավաբանական անձը քրեական օրենքով պաշտպանվող շահերի դեմ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս կատարված հանցանքի համար ենթակա չէ քրեական պատասխանատվության Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով, եթե տվյալ հանցագործության համար օտարերկրյա պետությունում քրեական պատասխանատվության չի ենթարկվել:

22. Նշվածներից ո՞րը չի հանդիսանում գույքի սեփականատեր չհամարվող անձի գույքային իրավունք:

ա/ Առողջությանը պատճառված վնասի հատուցման իրավունք:
բ/ Գույքի օգտագործման իրավունք:
գ/ Գրավի իրավունք:
դ/ Հողամասի կառուցապատման իրավունք:

23. Նշել ճիշտ պատասխանը: Վարձատուի կողմից հիմնական վերանորոգում կատարելու պարտականության խախտումը վարձակալին իրավունք է տալիս իր ընտրությամբ՝

ա/ Կատարել պայմանագրով նախատեսված կամ անհետաձգելի անհրաժեշտությամբ ծագած հիմնական վերանորոգում և վարձակալից պահանջել վերանորոգման արժեքը կամ դա հաշվարկել վարձավճարի հաշվին:
բ/ Պահանջել համապատասխան չափով նվազեցնելու վարձավճարը:
գ/ Պահանջել լուծելու պայմանագիրը և հատուցելու վնասները:
դ/ Բոլոր տարբերակները ճիշտ են:

24. Նշված պնդումներից ո՞րն է սխալ:

ա/ Հարկադիր գույքային սերվիտուտ կարող է սահմանվել հարևան կամ այլ հողամասով անցնելու, երթևեկելու, էլեկտրահաղորդման, կապի գծերի կամ խողովակաշարերի անցկացման ու շահագործման, ջրամատակարարման, հողաբարելավման, վերանորոգման, շինարարական աշխատանքներ կատարելու կամ գերակա գույքի սեփականատիրոջ այլ կարիքները բավարարելու համար, որոնք չեն կարող ապահովվել առանց սերվիտուտ սահմանելու, կամ որոնց ապահովումը կապված է անհամաչափ զգալի ծախսերի հետ:
բ/ Ծառայող գույքի սեփականատերն իրավունք չունի անշարժ գույքի սերվիտուտի համար վճար պահանջելու այն անձից, ի շահ որի սահմանվել է գույքային սերվիտուտը, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով:
գ/ Գույքային սերվիտուտ կարող է սահմանվել գերակա գույքի սեփականատիրոջ կամ կառուցապատման իրավունք ունեցող անձի պահանջով:
դ/ Բնակելի տարածություն օգտագործելու իրավունքը ուրիշի գույքից սահմանափակ օգտվելու իրավունք է:

25. Նշված պնդումներից ո՞րն է ճիշտ:

ա/ Հանձնարարության պայմանագրով մի կողմը (հանձնակատարը) պարտավորվում է մյուս կողմի (հանձնարարողի) անունից և նրա հաշվին կատարել որոշակի իրավաբանական գործողություններ:
բ/ Հանձնակատարի կատարած գործարքից իրավունքները և պարտականություններն անմիջականորեն ծագում են հանձնակատարի համար:
գ/ Հանձնակատարը ոչ մի դեպքում իրավունք չունի շեղվել հանձնարարողի ցուցումներից:
դ/ Բոլոր տարբերակները ճիշտ են:

Խնդիրների լուծման հիմքում պետք է դրվեն 2024 թվականի դեկտեմբերի դրությամբ գործող իրավական կարգավորումները՝ անկախ այդ խնդիրներում հղում կատարված տարեթվերից:

ԽՆԴԻՐ 1

Կարենը (այսուհետ նաև՝ Աշխատող) 2023 թվականի հունիսի 1-ից աշխատում է «ՍԻԹԻԷՍ» ընկերությունում (այսուհետ նաև՝ Ընկերություն)՝ որպես ծրագրավորող: Աշխատողի և Ընկերության միջև կնքված աշխատանքային պայմանագրով Աշխատողի համար աշխատանքային օրերն են՝ երկուշաբթիից ուրբաթ, իսկ աշխատանքային ժամերը 9:00-ից մինչև 18:00-ն: Աշխատողին յուրաքանչյուր աշխատանքային օր տրամադրվում է ընդմիջում՝ 13:00-ից մինչև 14:00-ն:

Կարենը 12.08.2024թ. (երկուշաբթի) և 13.08.2024թ. (երեքշաբթի) աշխատանքի է ներկայանում 10:00-ին: Այս մասին տեղեկանալով՝ 14.08.2024թ. Ընկերության տնօրենը Կարենին գրավոր կերպով ծանուցում է և վերջինիցս պահանջում է հինգ աշխատանքային օրվա ընթացքում գրավոր բացատրություն ներկայացնել սահմանված ժամին Աշխատանքի չներկայանալու մասին: Կարենը ստանում է նշված ծանուցումը, սակայն սահմանված ժամկետում բացատրություն չի ներկայացնում՝ առանց որևէ պատճառի:

Ընկերության տնօրենը Աշխատողից բացատրություն չստանալուց հետո 26.08.2024թ. վերջինիս նկատմամբ կիրառում է կարգապահական պատասխանատվության միջոց և տուգանում է Աշխատողին 20,000 դրամով:

Կարենն իմանալով այդ մասին հայտնում է Ընկերության տնօրենին, որ Գործատուն չէր կարող իրեն ենթարկել կարգապահական պատասխանատվության, քանի որ ինքը բացատրություն չի ներկայացրել, իսկ առանց իր բացատրության Գործատուն իրավունք չունի իրեն ենթարկել կարգապահական պատասխանատվության, քանի որ Գործատուին հայտնի չէ՝ արդյոք իր ուշացումները հարգելի են եղել, թե ոչ:

Այս միջադեպից հետո Կարենը հաջորդ աշխատանքային օրը չի ներկայանում աշխատանքի: Աշխատանքի չներկայանալու հաջորդ օրը Գործատուն առանց Կարենին ծանուցելու վերջինիս ազատում է աշխատանքից: Այդ մասին իմանալով՝ Կարենը հայտնում է Գործատուին, որ ինքը այդ օրը հոգնած է եղել, դրա համար չի ներկայացել աշխատանքի, իսկ Գործատուն չէր կարող աշխատանքից ազատել իրեն, քանի որ ինքը չի ծանուցվել այդ մասին, ինչը հանդիսանում է Աշխատանքային օրենսգրքի խախտում:

1. Արդյո՞ք Գործատուն իրավունք ուներ Աշխատողի նկատմամբ տվյալ դեպքում կիրառել կարգապահական պատասխանատվության միջոց առհասարակ և արդյո՞ք Գործատուի կողմից Աշխատողին 20,000 դրամով տուգանելն իրավաչափ է (հիմնավորե՛ք պատասխանը): Ինչպիսի՞ կարգապահական տույժեր կարող է գործատուն կիրառել աշխատողի նկատմամբ: (5 միավոր)

2. Արդյո՞ք Գործատուն իրավունք ուներ տվյալ դեպքում Աշխատողին ազատել աշխատանքից: Հիմնավորե՛ք պատասխանը՝ անդրադառնալով նաև Աշխատողի պնդումներին: (4 միավոր)

3. Թվարկե՛ք Գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագիրը լուծելու Աշխատանքային օրենսգրքով սահմանված դեպքերը: (5 միավոր)

ԽՆԴԻՐ 2

Արմանը և Սուրենը 01.08.2023թ. օրենքով սահմանված կարգով կնքում են վարձակալության պայմանագիր, որով Արմանը (այսուհետ նաև՝ **Վարձատու**) իրեն սեփականության իրավունքով պատկանող Երևան քաղաքում գտնվող բնակարանը վարձակալության է հանձնում Սուրենին (այսուհետ նաև՝ **Վարձակալ**) 1 տարի ժամկետով: Վարձակալության պայմանագրով ամսական վարձավճարը սահմանվում է՝ 150,000 դրամ: Վարձատուն պայմանագիրը կնքելիս նշում է, որ բնակարանը ունի կոմունալ բոլոր հարմարությունները (տաք և սառը ջուր, էլեկտրաէներգիա, գազամատակարարում և այլն):

Պայմանագիրը կնքելուց հետո, երբ Վարձակալը սկսում է բնակվել բնակարանում, 01.12.2023թ. պարզվում է, որ բնակարանի ջեռուցման համակարգը ունի թաքնված թերություններ, ինչի պատճառով այն չի կարողանում բավարար չափով ապահովել բնակարանի ջեռուցումը: Վարձակալը իր միջոցներով վերացնում է ջեռուցման համակարգի թերությունները: Վարձակալը Վարձատուին տեղեկացնում է բնակարանի ջեռուցման համակարգի հետ կապված թերությունները վերացնելու վերաբերյալ և վերջինիցս պահանջում է իրեն փոխհատուցել թերությունները վերացնելու համար իր կրած ծախսերը, միևնույն ժամանակ տեղեկացնում է, որ անհետաձգելի անհրաժեշտություն է առաջացել իրականացնել բնակարանի հիմնական վերանորոգում և խնդրում է Վարձատուին իրականացնել այն ողջամիտ ժամկետում: Վարձատուն պատասխանում է, որ ինքը չի պատրաստվում փոխհատուցել Վարձակալի կատարած ծախսերը՝ կապված ջեռուցման համակարգի թերությունների վերացման հետ, քանի որ բնակարանը վարձակալության հանձնելիս ինքը չի իմացել ջեռուցման համակարգի թերությունների մասին, իսկ Վարձակալը ինքն է որոշել վերացնել այդ թերությունները և ինքն էլ պետք է կրի դրա ծախսերը: Միևնույն ժամանակ Վարձատուն հայտնում է, որ ինքը պարտավոր չէ իրականացնել բնակարանի հիմնական վերանորոգումը, քանի որ հիմնական վերանորոգման մասին առհասարակ չի նշվել վերջիններիս միջև կնքված վարձակալության պայմանագրով և հետևաբար օրենքի ուժով Վարձակալն է կրում նման վերանորոգման պարտականությունը:

Վարձակալը տեսնելով, որ Վարձատուն չի փոխհատուցում իր կատարած ծախսերը և ողջամիտ ժամկետում չի իրականացնում բնակարանի հիմնական վերանորոգումը, այլևս չի ցանկանում վարձակալել բնակարանը և ցանկանում է լուծել կնքված պայմանագիրը, ինչի համար և դիմում է իրավաբանի՝ խնդրելով վերջինիս պարզաբանել իր իրավունքները՝ կապված պայմանագիրը վաղաժամկետ լուծելու հետ:

1. Արդյո՞ք Վարձակալն իրավունք ուներ վերացնել ջեռուցման համակարգի թերությունները և փոխհատուցում պահանջել Վարձատուից (հիմնավորե՛ք պատասխանը՝ անդրադառնալով կողմերի փաստարկներին): Ներկայացրե՛ք վարձակալության հանձնված գույքի թերությունները հայտնաբերելիս վարձակալի և վարձատուի իրավունքները և պարտականությունները ըստ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի: (4 միավոր)

2. Արդյո՞ք Վարձատուն պարտավոր է իրականացնել բնակարանի հիմնական վերանորոգումը (հիմնավորե՛ք պատասխանը՝ անդրադառնալով կողմերի փաստարկներին): Եթե հիմնական վերանորոգումը հանդիսանում է Վարձատուի պարտականությունը և վերջինս չի իրականացնում այն, ինչպիսի՞ իրավունքներ ունի Վարձակալը: (4 միավոր)

3. Արդյո՞ք Վարձակալը իրավունք ունի նման պարագայում լուծել որոշակի ժամկետով կնքված վարձակալության պայմանագիրը: Ներկայացրե՛ք վարձակալության պայմանագիրը Վարձակալի կողմից միակողմանի լուծելու դեպքերը և կարգը՝ ըստ Քաղաքացիական օրենսգրքի: (4 միավոր)

ԽՆԴԻՐ 3

Արմենը վաղուց ցանկանում էր գնել ականջակալ, որպեսզի օտագործեր այն երեկոյան զբոսանքների ժամանակ: 2023թ. մայիսի 4-ին Արմենը «ԻՔՍԷՄ» խանութից (այսուհետ՝ Խանութ) 20,000 դրամով գնում է ականջակալ, որը ըստ Խանութի ցուցափեղկին նշված տեղեկատվության մեկ ամբողջական լիցքավորմամբ կարող էր աշխատել 12 ժամ: Ականջակալը գնելու պահին Խանութը Արմենին է տրամադրում համապատասխան դրամարկղային կտրոնը: Օգտագործելով ականջակալը՝ Արմենը նկատում է, որ վերջինս մեկ լիցքավորմամբ հնարավոր է օգտագործել շատ ավելի քիչ, քան նշված էր Խանութի ցուցափեղկին: Արմենը դիմում է իր ընկերոջը, ով զբաղվում է հեռախոսների և ականջակալների վերանորոգմամբ և վերջինս հայտնում է նրան, որ այդ ականջակալը մեկ լիցքավորմամբ հնարավոր է օգտագործել մինչև 8 ժամ, քանի որ այն խնդիր ունի մարտկոցների հետ:

Արմենը 2023 թվականի մայիսի 20-ին այցելում է Խանութ և հայտնում է, որ իրեն վաճառել են անորակ ականջակալ և պահանջում է հետ վերցնել ականջակալը ու իրեն վերադարձնել իր վճարած գումարը:

Խանութի պատասխանատուն, թեև ընդունում է, որ ականջակալների որակը ոչ պատշաճ է, սակայն Արմենի ներկայացրած պահանջներին պատասխանում է՝

1. Խանութը չի կարող ընդունել ականջակալը և Արմենին հետ վերադարձնել իր վճարած գումարը, քանի որ Արմենը բաց է թողել նման պահանջ ներկայացնելու համար օրենքով նախատեսված 14-օրյա ժամկետը,
2. Քանի որ ականջակալի թերությունը էական չէ, Արմենը առհասարակ իրավունք չունի Խանութից պահանջելու հետ վերցնել ականջակալը և իրեն վերադարձնել վճարված գումարը, քանի որ դա նախատեսված չէ օրենքով, այլ կարող է միայն պահանջել փոխարինել ականջակալը այլ ականջակալով կամ վերացնել թերությունները,
3. Եթե նույնիսկ Խանութը համաձայնի ընդունել ականջակալը, ոչ մի դեպքում չի վերադարձնի Արմենին վճարված ամբողջ գումարը, քանի որ վերջինս օգտագործել է ականջակալը և դրա արժեքը նվազել է:

Արմենը, ստանալով Խանութի պատասխանը, որոշում է դիմել դատարան և այդ նպատակով դիմում է փաստաբանի օգնությանը, որպեսզի վերջինս իրեն պարզաբանի իր իրավունքները:

1. Ինչպիսի՞ իրավահարաբերություններ են առաջացել Արմենի և Խանութի միջև և ինչպիսի՞ պայմանագիր է կնքվել վերջիններիս միջև: Ներկայացրե՛ք կնքված պայմանագրի հասկացությունը և կնքման պատշաճ կարգը: (4 միավոր)

2. Լուծե՛ք ներկայացված խնդիրը՝ անդրադառնալով կողմերի բոլոր փաստարկներին: (8 միավոր)

ԽՆԴԻՐ 4

Սուրենը ցանկանում է իր այգում գտնվող բացօթյա տարածքում տեղադրել աթոռներ և սեղաններ: Այդ նպատակով վերջինս դիմում է անհատ ձեռնարկատեր Կարենին, որը վարձատրության դիմաց փայտից պատրաստում է տարատեսակ իրեր: Սուրենը ներկայացնում է Կարենին, թե ինչ ապրանքներ են իրեն անհրաժեշտ և ինչ նպատակով է այն օգտագործելու: Վերջիններս գալիս են համաձայնության և կնքում են գրավոր պայմանագիր հետևյալի մասին՝

- Կարենը Սուրենի համար կպատրաստի մեկ սեղան և չորս աթոռներ, որի պատրաստման համար նյութերը կտրամադրի հենց Կարենը:
- Սուրենը Կարենին կվճարի 400 000 դրամ:
- Աշխատանքները Կարենի կողմից կկատարվեն 1 օրացուցային ամսվա ընթացքում:

Կարենը սահմանված ժամկետում պատրաստում է աթոռը և սեղանները և հանձնում է Սուրենին: Կարենը ապրանքները հանձնելիս նշում է, որ դրանք պատրաստված են բավականին բարձրորակ փայտից, սակայն բավականին շուտ բռնկվող են և խորհուրդ է տալիս դրանք հեռու պահել կրակից: Միևնույն ժամանակ Կարենը նշում է, որ աթոռները և սեղանը լաքապատվել են մեկ անգամ և անհրաժեշտ է լինելու 15 օրից կրկին դրանք լաքապատել՝ վերջնական արդյունք ստանալու համար:

Սուրենը աթոռը և սեղանները տեղադրում է այգում, սակայն հաջորդ օրը նկատում է, որ տեղ-տեղ դրանք խոնավացել են և դեֆորմացվել, որից հետո ուշադիր զննում է աթոռները և սեղանը և պարզում է, որ դրանց դետալները պատշաճ կերպով ամրացված չեն, ինչի պատճառով աթոռները և սեղանը բավականաչափ ամուր չեն և կարող են կոտրվել օգտագործելիս: Այս մասին Սուրենը անմիջապես հայտնում է Կարենին և պահանջում է կրկին, արդեն պատշաճ կերպով պատրաստել աթոռները և սեղանը: Կարենը պատասխանում է, որ նախ ինքը հայտնել է, որ 15 օրից կրկին անհրաժեշտ է լինելու լաքապատել ապրանքները, ինչից ուղղակիորեն հետևում էր, որ սեղանը և աթոռները չպետք է տեղադրվեին այգում, որտեղ կարող էին վնասվել խոնավությունից, և երկրորդը, եթե նույնիսկ սեղանը և աթոռները մի փոքր ամուր չեն, միևնույն է նման դեֆորմացումը առհասարակ դրա հետ կապ չունի այլ միայն երկրորդ անգամ լաքապատված չլինելու խնդիրն է: Կարենը պատասխանում է, որ ինքը տրամադրել է սահմանված որակի ապրանք և չի պատրաստվում կրկին կատարել աշխատանքը և Սուրենը առհասարակ իրավունք չունի իրենից դա պահանջել, այլ միայն կարող է պահանջել ամրացնել աթոռները և սեղանը (եթե նման խնդիր իսկապես առկա է)՝ բերելով պատշաճ որակի, քանի որ թերությունը էական չէ և հնարավոր է հեշտությամբ վերացնել:

1. Ինչպիսի՞ իրավահարաբերություններ են առաջացել Կարենի և Սուրենի միջև և ինչպիսի՞ պայմանագիր է կնքվել: Տվե՛ք կնքված պայմանագրի հասկացությունը: (4 միավոր)

2. Լուծե՛ք խնդիրը՝ անդրադառնալով կողմերի բոլոր փաստարկներին և խնդրում նշված վերաբերելի փաստերին: Խնդրում առկա փաստերից ելնելով՝ ինչպիսի՞ պահանջներ կարող էր առհասարակ ներկայացնել Սուրենը Կարենին՝ եթե իսկապես աթոռները և սեղանը ոչ պատշաճ որակի էին (8 միավոր):